«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
04 հուլիսի 2017 թվականի

«Կառավարման ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը»
հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Կառավարման ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը»** հարցը (զեկուցող՝ կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Մ.Ն.Թավադյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. դեկանատը և ամբիոնները զգալի աշխատանք են կատարել ՀՊՏՀ 2016-2020 թթ. ռազմավարական զարգացման ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման, ուսումնական գործընթացը համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումներին և հանձնարարականներին համապատասխան կազմակերպելու, ուսումնական ծառայությունների և գիտահետազոտական աշխատանքների որակը բարձրացնելու ուղղությամբ:

Ուսումական տարվա սկզբից ֆակուլտետում կատարվել են ծավալուն աշխատանքներ և ուսումնական գործընթացը կազմակերպվել է հաստատված ժամանակացույցին համապատասխան:

2017 թ. հունիսի 1-ի դրությամբ կառավարման ֆակուլտետի ուսանողների ընդհանուր թիվը բոլոր կրթաձևերում կազմել է 1359, այդ թվում՝ առկա ուսուցման բակալավրիատում՝ 765, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 359, առկա ուսուցման մագիստրատուրայում՝ 163, հեռակա ուսուցման մագիստրատուրայում՝ 72:

Հաշվետու տարվա առաջին կիսամյակի ամփոփիչ քննաշրջանի արդյունքներով ուսման առաջադիմությունը ֆակուլտետում կազմել է. առկա ուսուցման բակալավրիատում՝ 70.4%, առկա ուսուցման մագիստրատուրայում՝ 67.5%, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 32.8%, հեռակա ուսուցման մագիստրատուրայում՝ 38.7%:

2016-2017 ուստարվա առկա ուսուցման բակալավրիատի ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են 154 ուսանողներ, որոնցից 148-ը ավարտել են բուհը: Նախորդ տարվա շրջանավարտներից ավարտել են 11-ը: Առկա ուսուցման մագիստրատուրան ավարտել է 54 մագիստրոս: Հեռակա ուսուցման բակալավրիատն ավարտել է 100 ուսանող: Նախորդ տարվա շրջանավարտներից ավարտել են 12-ը:

1. Կրթական գործընթացի բարեփոխումներ

Այս տեսակետից անհրաժեշտ է փաստել, որ ՀՀ կառավարության կողմից 2014 թ. հաստատված մասնագիտությունների ցանկում ֆակուլտետում բակալավրիատի մինչ այդ եղած մասնագիտություններից ներառվել է միայն «Կառավարում (ըստ ոլորտի)» մասնագիտությունը և 2015 թ. սկսվել է հիշյալ մասնագիտության կրթական ծրագրի մշակման գործընթացը՝ հիմնված ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակով սահմանված չափորոշիչների և միջազգային փորձի ուսումնասիրության վրա:

Գործընթացը ներառել է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների հարցումների ամփոփումն ու մշակվել է բուհի «Կրթական ծրագրեր կազմելու ուղեցույցի» հիման վրա:

Սկսած 2016-2017 ուստարվանից ընդունելությունը կազմակերպվել է նոր կրթական ծրագրով:

Հաշվետու ուսումնական տարում բակալավրիատի առկա ուսուցման համակարգ ընդունվել է 205 ուսանող, որից 16-ը՝ պետպատվերի համակարգում, 189-ը՝ վճարովի ուսուցման համակարգում: Իսկ հեռակա ուսուցման բակալավրիատ ընդունվել են 44 դիմորդներ:

Կրթական բարեփոխումների առումով հարկ է նշել, որ 2016-2017 ուստարին բավական հաջողված էր նաև գիտահետազոտական աշխատանքների ակտիվացման իմաստով: Ֆակուլտետի ամբիոնները շարունակել են աշխատանքները իրենց գիտահետազոտական թեմաների շրջանակներում:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից 2016-2017 ուսումնական տարում հրատարակվել են 2 բուհական դասագիրք («Մենեջմենթ», 4-րդ հրատարակչություն, բարեփոխված և լրացված և «Ճարտասանություն»), 9 ուսումնական ձեռնարկ, 6 մենագրություն, շուրջ 113 գիտական հոդված, այդ թվում 4-ը՝ միջազգային հանդեսներում, դասախոսությունների տեքստ, ուսումնամեթոդական ցուցումներ և այլն:

2. Մարդկային ռեսուրսներով ապահովվածություն

2017 թվականի հունիսի 1-ի դրությամբ ֆակուլտետի հիմնական հաստիքային դասախոսների թիվը 108 է, որից 11-ը՝ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 59-ը՝ գիտությունների թեկնածու, դոցենտ, 38-ը՝ ասիստենտ և դասախոս:

Ֆակուլտետի թողարկող ամբիոններն ունեն 14 ասպիրանտ և 7 հայցորդ: Հաշվետու տարում ասպիրանտներից և հայցորդներից 4-ը պաշտպանել են թեկնածուական ատենախոսությունները և նոր ուսումնական տարվանից կհամալրեն դասախոսների կազմը:

3. Գործունեության միջազգայնացում

Ֆակուլտետի միջազգայնացման գործընթացն իրականացվում է բուհի միջազգայնացման գործընթացի շրջանակներում: Այսպես՝ 2016-2017 ուստարում ֆակուլտետի 2 ուսանողներ (1 մագիստրանտ և 1 բակալավր) «Էրասմուս+» սովորողների փոխանակման ծրագրի շրջանակներում մեկ կիսամյակ ուսումնառել են եվրոպական տարբեր բուհերում: Նույն ծրագրի շրջանակներում դասախոսների փոխանակման գործընթացով եվրոպական տարբեր բուհերի դասախոսներ հյուրընկալվել են ՀՊՏՀ-ում և դասախոսություններով հանդես են եկել ֆակուլտետի ուսանողների համար:

4. Ռեսուրսային ապահովվածություն

Ֆակուլտետի լսարանային ֆոնդը բավարարում է ուսումնական գործընթացն ամբողջությամբ ֆակուլտետի մասնաշենքում կազմակերպելու համար: Ֆակուլտետում առկա է համակարգչային տեխնիկայով և պրոյեկտորով (կամ Smart գրատախտակով) համալրված 5 լսարան: Դրանցից մեկը նորոգվել և կահավորվել է հարվետու տարում: 2 նման լսարանների գույքը՝ ուսանողական սեղան-նստարանները, դարձյալ հաշվետու տարում ամբողջությամբ նորացվել են:

5. Կառավարման բարելավում և ընթացակարգերի մշակում

Հաշվետու տարում մշակվել և գիտական խորհրդի կողմից հաստատվել է ֆակուլտետի նոր կանոնադրությունը: Բացի այդ, ֆակուլտետի աշխատակիցներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերել բուհի գործունեության հետ կապված տարբեր կանոնակարգերի և ընթացակարգերի մշակմանը (բուհի պրոֆեսորա-դասախոսական կազմի վարկանշավորման կարգը, ՀՊՏՀ վարչական աշխա-տակիցների աշխատանքի գնահատման կարգը, ՀՊՏՀ ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատման կարգը և այլն):

Միաժամանակ անհրաժեշտ ենք համարում նշել, որ կան որոշակի թերություններ և բացթողումներ ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթության որակի բարելավման, նոր մեթոդների ներդրման, գիտահետազոտական աշխատանքների կատարման գործում: Խոսքը մասնավորապես վերաբերվում է դասախոսությունների, սեմինար և գործնական պարապմունքների ոչ բավարար մակարդակներին, ուսանողության հետ կատարվող անհատական աշխատանքների որակին: Ցածր է ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառման մակարդակը:

Արձանագրված խնդիրներ

1. Դասավանդման որակի և մեթոդների, ուսանողությանը մատուցվող նյութի և մատուցման եղանակների հետ կապված խնդիրներ, որոնք հատկապես ակնառու են մագիստրատուրայում:
2. Ամբիոններում արտաքին ֆինանսավորմամբ գիտահետազոտական և դրամաշնորհային ծրագրերի բացակայություն:
3. Գիտահետազոտական աշխատանքներում պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվածության, ձեռքբերված տեսական դրույթները դասա-վանդման պրակտիկայում կիրառման խնդիրներ:
4. Ուսանողների փորձառությունների կազմակերպման ու անցկացման գործընթացների հետ կապված խնդիրներ:
5. Ֆակուլտետի գործունեության միջազգայնացմանն ուղղված հիմնա-խնդիրներ.
   1) ցածր է ակադեմիական փոխանակումների և միջազգային այլ ծրագրե-րում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվա-ծության մակարդակը.
   2) ֆակուլտետի դասախոսների և վարչական աշխատողների՝ օտար լեզուների իմացության անբավարար մակարդակը դառնում է ոչ միայն միջազգային շփումների զարգացումը խոչընդոտող գործոն, այլև նվազեցնում է ֆակուլտետի գրավչությունն արտասահմանցի ուսանող-ների համար:
6. Դասամատյանների վարման, ամփոփաթերթերում գիտելիքների գնահատ-ման անսխալ գրանցման, ուսանողների հաճախելիության և ընթացիկ ակտիվության ճիշտ հաշվարկման խնդիրներ.
7. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրախոսու-թյունների որակի հետ կապված խնդիրներ:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. **Կառավարման ֆակուլտետի ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարվածը գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել ֆակուլտետի դեկանատին՝**

1) ակտիվացնել աշխատանքները ՀՊՏՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման ուղղությամբ՝ ապահովելով պրոֆեսորադասախոսական կազմի առավել լայն ընդգրկվածությունն այդ աշխատանքներում.
2) ուշադրության կենտրոնում պահել ֆակուլտետում վարվող կադրային քաղաքականության, ամբիոնների կողմից դասախոսների ընտրության և համալրման գործընթացը՝ նախապատվություն տալով բանիմաց, ակտիվ, գիտահետազոտական գործունեություն իրականացնող, մանկավարժական և մասնագիտական անհրաժեշտ ունակություն ունեցող կադրերին.
3) հսկողություն իրականացնել դասալսումների գործընթացի նկատմամբ, ֆակուլտետի խորհրդում պարբերաբար քննարկել դրանց արդյունքները.
4) ակտիվացնել աշխատանքները մագիստրոսական խմբերում դասավանդող դասախոսների ընտրության և բարձրորակ դասախոսական կադրերով ապահովելու, ինչպես նաև մատուցվող նյութի որակը բարձրացնելու ուղղությամբ.
5) հետևողական աշխատանք իրականացնել դասամատյաններում ուսանողների հաճախումների և ընթացիկ ակտիվության հաշվառման ու գնահատման գործընթացի ուղղությամբ, դասաձախողման յուրաքանչյուր դեպք քննարկել դեկանատի և ամբիոնների նիստերում.
6) խրախուսել ուսումնամեթոդական ձեռնարկների, խնդրագրքերի, դասախոսությունների նյութերի նախապատրաստման և հրատարակման աշխատանքները.
7) ֆակուլտետի խորհրդի նիստերում պարբերաբար քննարկել ամբիոններում և ֆակուլտետում միջազգայնացմանը վերաբերող հարցեր.
8) ակտիվացնել ֆակուլտետի ուսանողների և դասախոսների մասնակցությունը ակադեմիական շարժունության ծրագրերին.
9) ակտիվացնել ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) ֆակուլտետային խորհրդի գործունեությունը՝ առավելագույնս ներգրավելով հետազոտական աշխատանքի ունակություններով օժտված ուսանողներին և մագիս-տրանտներին,

3. **Կառավարման ֆակուլտետի կազմի մեջ մտնող ամբիոնների վարիչներին՝**

1) մագիստրատուրայի բոլոր մասնագիտությունների և մասնագիտացումների համար մշակել կրթական և առարկայական նոր ծրագրեր՝ ՀՊՏՀ կրթական ծրագրերի մշակման ուղեցույցի պահանջներին համապատասխան.

2) ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի միջոցով ապահովել ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի սահուն սերնդափոխություն՝ կարևորելով կադրերի ոչ միայն գիտահետազոտական, այլև մանկավարժական ունակությունները.
3) ակտիվացնել հայալեզու գրքերի, ուսումնական ձեռնարկների, դասախոսությունների նյութերի, խնդիրների և թեստավորման ժողովածուների հրատարակումը.
4) խրախուսել «Էրասմուս+» փոխանակման ծրագրի շրջանակներում դասախոսների փոխանակման ու գործընկեր համալսարաններում դասավանդման ծրագրերին ամբիոնների դասախոսների ակտիվ մասնակցությունը.
5) ապահովել կրթական և առարկայական ծրագրերի առաջավոր արտասահմանյան համալսարանների ծրագրերի հետ համապատասխանությունը.
6) ապահովել ակադեմիական փոխանակման ծրագրերով արտասահմանյան համալսարաններում դասավանդած կամ հետազոտություններ իրականացրած մասնագետների փորձի տարածումը ամբիոնի աշխատողների շրջանում.
7) ըստ մասնագիտացման՝ համալսարանում հյուրընկալվող արտասահմանյան համալսարանների դասախոսների հետ հաստատել սերտ և տևական կապեր՝ համատեղ հետազոտությունների իրականացման, համահեղինակությամբ հոդվածներն արտասահմանում կամ Հայաստանում հրատարակելու նպատակով.
8) խրախուսել դասախոսությունների, սեմինար և գործնական պարապմունքների վարման նոր, ժամանակակից, արդիական և արդյունավետ մեթոդների կիրառումը.
9) ակտիվացնել գիտահետազոտական աշխատանքները, բարձրացնել գիտական հետազոտությունների մակարդակն ու որակը.
10) պարբերաբար վերանայել ուսումնաարտադրական, գիտամանկավարժական և գիտահետազոտական փորձառությունների նոր ծրագրերը, պատշաճ հսկողություն իրականացնել փորձառության անցկացման վայրի ընտրության նկատմամբ:

4. **Սույն որոշումը քննարկել ֆակուլտետի խորհրդի և ամբիոնների առաջիկա նիստերում ու ձեռնարկել համապատասխան միջոցներ նշված հանձնարարականների կատարման համար:**

5. **Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել պրոռեկտորներ Պ.Ա.Քալանթարյանին, Մ.Ն.Հարությունյանին և Գ.Ի.Վարդանյանին:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

04.07.2017 թ.